



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի նոյեմբերին (վերլուծություն)

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 19788 գործարք, որոնց քանակը 2017 թվականի հոկտեմբեր ամսվա համեմատ աճել է 1.4 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ 31.8 %-ով:

2017 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5294 օտարման գործարքի 77.2 %-ը կազմել է առուվաճառքը, 22.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 36.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի նոյեմբերին, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքը նվազել է 6.8 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 30.3 %-ով:

2017 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի նոյեմբերին, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.6 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 35.9 %-ով:

2017 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2016 թ.	նոյեմբեր 2017 թ.	հոկտեմբեր 2017 թ.
Կենտրոն	428250	456500	455800
Արաբկիր	357350	344500	343500
Քանաքեռ-Զեյթուն	283350	267400	267400
Նոր Նորք	254400	231500	231500
Ավան	261900	248600	248600
Էրեբունի	252500	236050	238000
Շենգավիթ	258000	243200	243200
Դավթաշեն	277000	255600	254500
Աջափնյակ	251500	229500	228500
Մալաթիա-Սեբաստիա	244300	233700	232500
Նուբարաշեն	157600	158500	158000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 0.1%-ով:

2017 թվականի նոյեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 398 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի հոկտեմբերի համեմատ նվազել է 7.2 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 22.5 %-ով:

2017 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	-----------------------

		նոյեմբեր 2016 թ.	նոյեմբեր 2017 թ.	հոկտեմբեր 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116200	106000	104000
	Ապարան	58900	59000	59000
	Թալին	66900	62000	62000
Արարատ	Արտաշատ	99200	93100	92000
	Մասիս	115800	99850	99850
	Վեդի	101750	90000	91500
	Արարատ	77750	79000	78050
Արմավիր	Վաղարշապատ	154200	120000	122000
	Արմավիր	121250	92000	92800
	Մեծամոր	87600	69100	70000
Գեղարքունիք	Սևան	99400	82200	80000
	Գավառ	60800	51000	51000
	Մարտունի	107700	107500	107000
	Վարդենիս	45400	46100	46100
	Ճամբարակ	28800	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	76500	78000
	Ստեփանավան	74900	66000	66000
	Սպիտակ	99950	88000	88000
	Ալավերդի	55950	47000	48000
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	30000
Կոտայք	Արվյան	155150	154200	152000
	Նոր Հաճն	128550	119500	118000
	Բյուրեղավան	108250	93500	92300
	Եղվարդ	110050	106000	106000
	Հրազդան	63900	56000	56000
	Ծաղկաձոր	292400	288000	288000
	Չարենցավան	85500	73000	73000
Շիրակ	Գյումրի	109450	85000	85000
	Արթիկ	67400	66000	66000
	Մարալիկ	41150	42300	42300
Սյունիք	Գորիս	124100	125000	125000
	Կապան	95700	97200	96500
	Սիսիան	92400	91000	89000
	Մեղրի	83550	92000	92000
	Քաջարան	95000	99500	99500
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	92000	92000
	Եղեգնաձոր	126550	121500	121500
	Ջերմուկ	113300	98000	98000
Տավուշ	Դիլիջան	115700	110000	110000
	Իջևան	118600	113000	113000
	Բերդ	60550	62000	62000
	Նոյեմբերյան	50500	52000	52000
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի հոկտեմբերի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 499 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան

քաղաքում՝ 152 գործարք, մարզերում՝ 347 գործարք: 2017 թվականի նոյեմբերին, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 5.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 15.1 %-ով, իսկ մարզերում՝ մնացել է անփոփոխ: 2017 թվականի նոյեմբերին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 34.5 %-ով, իսկ մարզերում՝ 12.3 %-ով:

2017 թվականի նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2016 թ.	նոյեմբեր 2017 թ.	հոկտեմբեր 2017 թ.
Կենտրոն	476350	476000	476000
Արաբկիր	383200	381000	381000
Քանաքեռ-Զեյթուն	295300	283100	283100
Նորք-Մարաշ	319550	302000	302000
Ավան	270750	263000	263000
Էրեբունի	239900	234130	234130
Շենգավիթ	255150	230000	230000
Դավթաշեն	276200	270000	270000
Աջափնյակ	250300	240000	240000
Մալաթիա-Սեբաստիա	238250	234100	234100
Նուբարաշեն	150800	150000	150000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի հոկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

2017 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		նոյեմբեր 2016 թ.	նոյեմբեր 2017 թ.	հոկտեմբեր 2017 թ.

Արագածոտն	Աշտարակ	136250	130000	130000
	Ապարան	60050	51000	51000
	Թալին	69250	66000	66000
Արարատ	Արտաշատ	100100	97000	97000
	Մասիս	115100	110100	110100
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	148100	148100
	Արմավիր	107000	99000	99000
Գեղարքունիք	Սևան	94950	92000	92000
	Գավառ	57100	53800	53800
	Մարտունի	96200	95000	95000
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	32000
Լոռի	Վանաձոր	100900	98200	97100
	Ստեփանավան	91200	82000	82000
	Սպիտակ	114050	108000	108000
	Ալավերդի	50300	51000	50500
	Տաշիր	51900	45000	45000
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157350	156400	154200
	Նոր Հաճն	129800	128000	126000
	Բյուրեղավան	120500	110000	109800
	Եղվարդ	116100	109000	109000
	Հրազդան	82600	71000	71000
	Ծաղկաձոր	305000	300000	300000
	Զարենցավան	83000	80000	80000
Շիրակ	Գյումրի	119350	116000	116000
	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130050	128000	128000
	Կապան	100750	101500	101500
	Սիսիան	96500	96700	96700
	Մեղրի	84650	89500	89500
	Դաստակերտ	11610	11810	11810
Վայոց ձոր	Վայք	90150	88100	88100
	Եղեգնաձոր	116750	114000	114000
	Ջերմուկ	131300	129000	129000
Տավուշ	Դիլիջան	115750	115000	115000
	Իջևան	123250	120200	120200
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, աճել է 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարվել է 2000 միավոր (2822.72 հա) հող, որից Երևանում՝ 95 միավոր (13.00 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 1127 միավոր (2730.80 հա), որից Երևանում՝ 10 միավոր (3.16 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 586 միավոր (54.89 հա), որից Երևանում՝ 41 միավոր (2.14 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 228 միավոր (15.63 հա), որից Երևանում՝ 39 միավոր (1.52 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 43 միավոր (11.87 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.18 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 8 միավոր (3.18 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 8 միավոր (6.35 հա), որից Երևանում՝ 1 միավոր (6.00 հա) ընդհանուր մակերեսով:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1725 միավորի (2700.64 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 78 միավոր (10.47 հա), նվիրատվության գործարք՝ 267 միավորի (121.56 հա), որից Երևանում՝ 14 միավոր (2.51 հա) և փոխանակության գործարք՝ 8 միավորի (0.52 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.02 հա):

Հանրապետությունում 2017 թվականի նոյեմբերին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 51.2 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 40.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 60.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 7.0 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1687.11 հա, որից 1678.16 հա գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 37.4 %-ը կամ 646 միավորը (432.07 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 27 միավոր (0.82 հա), իսկ 62.1 %-ը կամ 1071 միավորը (2267.54 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 51 միավոր (9.65 հա): 2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 8 գործարք /1.03 հա/:

Ստորև ներկայացված է 2017 թվականի նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	3	0.17	9	0.32	15	0.33	7	1.28	1	0.01	25	1.36	17	1.00
Արագածոտն	52	85.67	9	0.71	18	1.89	9	0.34	99	200.35	1	0.01	21	2.77	2	0.20
Արարատ	53	78.70	3	3.24	7	0.13	5	0.26	132	110.07	0	0.00	62	5.56	5	0.04
Արմավիր	17	18.94	1	0.06	12	1.43	9	0.24	140	1659.21	1	0.26	63	6.87	4	0.07
Գեղարքունիք	8	7.13	9	2.45	36	4.21	27	4.69	82	57.13	0	0.00	13	1.85	5	0.57
Լոռի	7	2.20	2	0.03	15	0.15	26	0.34	27	19.22	0	0.00	8	0.59	4	0.44
Կոտայք	66	126.26	3	0.88	56	3.98	20	0.79	134	105.36	4	1.98	87	7.47	8	0.30
Շիրակ	7	12.96	0	0.00	10	0.36	11	1.38	39	34.95	0	0.00	7	0.76	1	0.10
Սյունիք	16	26.37	2	1.33	5	0.06	7	0.16	8	14.21	0	0.00	6	0.60	7	0.21
Վայոց ձոր	32	32.09	3	0.71	17	1.30	15	0.65	3	1.53	0	0.00	2	0.43	0	0.00
Տավուշ	9	6.37	0	0.00	2	0.04	8	0.44	33	23.24	0	0.00	12	1.53	0	0.00
Ընդամենը	267	396.69	35	9.58	187	13.87	152	9.62	704	2226.55	7	2.26	306	29.79	53	2.93

Ստորև ներկայացված է 2017 թվականի նոյեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

Ընդամենը	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
			բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր			
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	16	0.60	2	0.16	7	0.22	7	0.22	11	0.21	0	0.00	1	0.01	2	0.10	8	0.10
Արագածոտն	5	0.16	1	0.13	2	0.02	2	0.01	83	88.42	52	85.67	8	0.57	16	1.86	7	0.32
Արարատ	6	3.36	1	3.16	3	0.01	2	0.19	58	60.37	49	60.10	2	0.08	4	0.12	3	0.07
Արմավիր	3	0.04	0	0.00	1	0.03	2	0.01	36	20.63	17	18.94	1	0.06	11	1.40	7	0.23
Գեղարքունիք	7	0.68	1	0.07	3	0.19	3	0.42	73	17.80	8	7.13	8	2.38	33	4.02	24	4.27
Լոռի	11	0.07	0	0.00	4	0.01	7	0.06	39	2.65	7	2.20	2	0.03	11	0.14	19	0.28
Կոտայք	11	0.282	0	0.00	10	0.28	1	0.002	129	108.67	61	103.30	3	0.88	46	3.70	19	0.79
Շիրակ	7	0.08	0	0.00	4	0.02	3	0.06	21	14.63	7	12.96	0	0.00	6	0.34	8	1.33
Սյունիք	2	1.232	1	1.23	1	0.002	0	0.00	26	26.12	14	25.80	1	0.10	4	0.06	7	0.16
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	67	34.75	32	32.09	3	0.71	17	1.30	15	0.65
Տավուշ	2	0.04	0	0.00	2	0.04	0	0.00	17	6.81	9	6.37	0	0.00	0	0.00	8	0.44
Ընդամենը	70	6.54	6	4.75	37	0.82	27	0.97	560	381.06	256	354.56	29	4.82	150	13.04	125	8.64

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 11 գործարք (42.13 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի նոյեմբերին, 2016 թվականի նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 4.0 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 37.5 %-ով, իսկ մարզերում՝ 4.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 5.7 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 2.9 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 2.9 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 29.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	43	82.57	40.4	476.8	199.2	59	24.35	365.0	12000.0	3465.3
Ապարան	7	2.05	111.0	2453.0	691.8	3	1.16	86.5	2727.3	672.5
Թալին	1	1.00	126.8	126.8	126.8	20	150.81	93.6	5494.5	690.2
Ծաղկահովիտ	1	0.05	1540.0	1540.0	1540.0	12	22.48	79.5	1000.0	440.0
Արարատի մարզ										
Արտաշատ	34	15.97	70.6	2626.6	585.0	54	13.26	335.1	10833.3	2726.5
Մասիս	5	9.84	68.9	179.3	108.8	13	15.70	200.0	11904.8	3376.5
Վեդի	10	34.29	59.2	300.0	149.2	62	80.45	207.0	10795.1	1946.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2.40	70.1	105.0	83.5	61	59.57	294.3	9090.0	1534.5
Բաղրամյան	9	15.03	70.9	709.0	197.1	31	1557.21	90.6	2561.1	790.0
Վաղարշապատ	5	1.51	143.8	3190.0	772.3	43	40.16	444.4	11764.7	2123.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						40	7.14	199.8	1875.0	552.5
Ճամբարակ	3	3.08	344.8	1000.0	727.6			60.5	953.3	352.0
Մարտունի	1	1.03	356.0	356.0	356.0	5	0.95	51.1	2850.0	730.0
Սևան						22	8.10	52.2	2134.8	380.5
Վարդենիս	4	3.02	118.2	1666.7	674.2	14	38.14	41.2	2575.1	362.7
Լոռու մարզ										
Ալավերդի	4	1.37	630.3	2461.0	1995.2	13	5.03	170.4	6424.2	550.0
Գուգարք	2	0.34	1576.3	1581.9	1579.1	6	4.48	234.6	6065.9	817.5
Սպիտակ	1	0.49	279.6	279.6	279.6	1	0.75	250.0	5555.5	645.0
Ստեփանավան						5	7.27	90.6	1686.6	422.0
Տաշիր						2	1.72	45.3	1384.4	190.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	19	52.64	76.1	429.5	266.6	57	25.59	279.3	11942.7	3851.2
Եղվարդ	25	28.06	70.0	1254.1	495.9	59	55.70	174.4	11971.8	2535.0
Հրազդան	17	22.60	133.7	1351.2	499.6	15	23.66	130.5	10256.4	1142.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.80	124.6	134.4	129.5	9	8.94	252.0	1693.1	740.0
Ամասիա						8	10.70	40.9	261.0	147.2
Անի	1	3.02	269.1	269.1	269.1	7	5.48	110.6	546.9	475.0
Աշոցք						1	1.10	58.5	215.8	144.0
Արթիկ	4	8.15	47.2	660.2	386.4	10	7.85	79.4	1428.6	537.4

Սյունիքի մարզ										
Գորիս						2	2.37	92.6	1023.2	660.0
Կապան	6	19.33	77.0	473.0	175.0	1	0.88	120.0	841.6	467.5
Մեղրի						1	0.21	193.0	3000.0	870.0
Սիսիան	8	6.48	69.0	219.6	129.8	4	10.75	46.3	1977.4	496.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	31	28.18	18.7	1539.3	204.8	3	1.53	125.0	10000.0	1863.0
Վայք	1	3.92	25.5	25.5	25.5			58.8	1430.7	655.0
Տավուշի մարզ										
Բերդ	4	1.51	217.5	360.4	307.8	12	3.90	213.3	3783.8	755.0
Իջևան	2	4.14	346.1	466.5	406.3	6	3.70	267.5	9454.5	1625.0
Նոյեմբերյան	3	0.71	330.5	550.2	404.2	15	15.64	46.7	7368.4	1092.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի նոյեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (տախտիկի շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	18276.8	205.1	2266.2	354.2	17	19071.5	130.7	22200.0	2587.5
Ապարան	2	334.0	457.9	909.7	683.8	1	1906.0	124.1	609.6	390.0
Թալին						1	1500.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2470.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ						16	15885.4	173.9	7140.3	902.0
Մասիս	3	604.9	1965.3	3243.6	2421.1	29	21329.6	187.5	25000.0	1203.2
Վեդի	1	602.0	664.5	664.5	664.5	17	18403.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	11	14049.0	850.6	850.6	850.6	17	22354.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						43	43358.0	197.4	26528.4	1529.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	21	25021.0	188.3	193.8	189.7	1	540.0	186.6	1084.3	683.0
Ճամբարակ	1	1500.0	104.0	104.0	104.0			71.3	2286.2	147.0
Մարտունի	5	5220.0	219.8	377.1	282.8	8	9239.5	119.3	5000.0	277.0
Սևան	1	45.4	1491.0	1491.0	1491.0	3	5900.0	240.0	3110.4	355.0
Վարդենիս	5	8422.6	240.3	341.0	320.9	1	2840.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	1019.9	161.8	161.8	161.8	1	1020.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	10	359.7	2105.4	3528.3	2410.0	3	863.3	77.9	14083.3	1258.3
Սպիտակ						3	2577.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	1435.3	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	4561.0	636.2	5200.0	3051.8	46	32981.7	264.5	35353.5	1960.0
Եղվարդ	27	28434.2	212.0	5037.5	1500.0	35	38028.8	173.6	27000.0	2850.3

Հրազդան	6	3957.3	416.7	3234.0	1706.4	6	3650.0	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	3385.8	233.1	5232.6	1767.6	3	3269.9	113.6	18750.0	333.0
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	216.2
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						3	3820.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1140.0	112.2	1700.0	364.0
Կապան	3	396.3	1020.0	1275.0	1133.5			67.9	2638.9	390.0
Մեղրի						1	550.0	68.5	632.9	270.0
Սիսիան	1	193.0	359.0	359.0	359.0	4	4330.0	123.5	875.0	263.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	17	13018.4	72.0	432.1	291.1	2	4290.0	96.7	7659.6	503.7
Վայք								120.7	1448.3	253.5
Տավուշի մարզ										
Բերդ						2	2162.0	75.8	810.0	133.0
Իջևան						6	4568.5	74.1	14423.1	471.2
Նոյեմբերյան						4	8561.9	125.0	1948.1	259.0

2017 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1340 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.8 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 95.8 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի նոյեմբերին, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 22.8 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ 2.2 անգամ:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 31 բնակարանի, 25 անհատական բնակելի տան, 365 հասարակական և 78 արտադրական նշանակության օբյեկտի, 836 հողի և 5 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 10831.54 հա հողից 0.24 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 10831.30 հա հողերից 10717.27 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 70.49 հա արդյունաբերական, 0.57 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Արարատի մարզում՝ 4246.12 հա, որից 4229.34 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2391 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 12.1 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, աճել է 15.7 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ 36.6 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.1 %), անհատական բնակելի տների (23.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.1 %) և հողերի (7.2 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1327 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017

թվականի հոկտեմբերի համեմատ աճել է 1.9 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ 42.8 %-ով:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել է 239.11 հա հող, որից 0.99 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 226.81 հա կամ 94.9 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 166.48 հա, որից 165.97 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 382 գործարք: 2017 թվականի նոյեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 9.3 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 2.7 անգամ: Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 293 գործարք, որը 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 19.1 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 3.0 անգամ: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, աճել 50.8 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 89.4 %-ով:

2017 թվականի նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել է 3105 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի հոկտեմբերի համեմատ, նվազել է 5.2 %-ով, իսկ 2016 թվականի նոյեմբերի համեմատ՝ աճել 19.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 15.7 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (25.1 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե